ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
BULLETIN OF THE ACADEMY OF SCIENCES OF THE ARMENIAN SSR

Բնական գիտություններ № 9, 1946 *Естественные науки*

Ա. Մնացականյան

ԲՈՒՍԱԲԱՆԱԿԱՆ ՄԻ ԿԱՐԵՎՈՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ՝ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ ՄՈՏ

Հայտնի բուսաբան Տիմիրյազևը, խոսելով տերևի մասին, գրում է. «Դարերի ընթացքում, մինչև անցյալ դարի վերջը, մարդը համառությամբ հրաժարվում էր ընդունել տերևի անմիջական օգտակարությունը... տերևը շարունակում էր համարվել շքեղ, բայց անօգուտ զզեստի թեթևամիտ փառքը... Այնինչ, ինչպես շուտով տեսնելու ենք, տերևն արմատի նման՝ անհրաժեշտ է բույսի սնունդառության գործում»:* *Հետո, նա իր միտքն ամփոփելուց առաջ կանգ է առնում նաև Կոիլովի* «Տերևները և արմատները» *առակի վրա, նշելով, որ Կոիլովն էլ նույն սխալ կարծիքն է ունեցել տերևի մասին.* «Կոիլովը զրպարտել է տերևներին և ես որպես բուսաբան, ուրեմն, որպես բույսերի փաստաբան, հանձն եմ առնում նրանց պաշտպանությունը»** *ասում է նա:*

Կարդալով Գրիգոր Նարեկացու «Գոհար վարդն վառ առեալ» *բանաստեղծությունը, մարդ ակամայից մտածում է, թե ինչքան մեծ կլիներ Տիմիրյազևի զարմանքն ու հիացումը, եթե նա ևս ծանոթ լիներ այդ ստեղծագործության հետ, որովհետև հայտնի բուսաբանի հայացքն, այս բանաստեղծության գեղարվեստական արժանիքներից առաջ, պիտի կանգ առներ այն տողի վրա, որով Գրիգոր Նարեկացին դեռ X դարում ասել է.*

«Քրքում վակասիր պտուղն սնաներ խուռն տերևով»:

*Չնայած «վակասիր» բառը մինչև օրս էլ մնացել է անմեկնելի***, բայց և այնպես դա չի խանգարում, որ մենք հաջորդ բառերի միտքը հասկանանք իրենց իսկական իմաստով* («Պտուղն սնաներ խուռն տերևով»): *Այս տողից պարզ երևում է, որ Նարեկացուն հայտնի է եղել տերևի՝ որպես սննդատուի դերը: Ճիշտ է, նա նշում է միայն պտղի համար, սակայն դա այնքան էլ էական չէ, որովհետև նա թերևս լոկ իր գործածած պատկերին է ցանկացել հարմարեցնել, կամ թերևս հենց այդպես էլ ըմբռնել է: Գլխավորն այն է, որ նա նշել է տերևի անունդ տալու երևույթը. մի բան, որն ինչպես տեսանք,* «մինչև անցյալ դարի վերջը» *ընդունված չի եղել: Որքան էլ որ զարմանալի թվա, այնուամենայնիվ մենք այս երևույթը չպիտի աշխատենք պատահականությամբ կամ այլաբանորեն մեկնաբանելուն դիմել:*

---

* *Կ. Ա. Տիմիրյազև—«Բույսի կյանքը», 1931, Մոսկվա, էջ 119:*

** *Նույն տեղը, էջ 144:*

*** *Հայկազյան բառարանում այդ բառի դիմաց գրված է «բառ անհայտ. թերևս որպես վականակ, հասունն: Աճառյանն էլ մոտավորապես նույնն է ասում:*

Այն գրված է մի այնպիսի հռչակավոր անձնավորության կողմից, որը հավասարապես վայելել է թե խոշոր բանաստեղծի, թե մեծ գիտնականի և թե հռչակավոր ուսուցչի (վարդապետի) տիտղոսները։ Եվ այդ բոլորն իրենց փայլուն արտացոլումն ունեն նրա ստեղծագործությունների մեջ։ Նրան հարկավոր է իր ժամանակի հոգևորականի ներաշխարհն անմահացնել, և նա հանճարեղորեն արել է այդ՝ մանրամասնորեն ուսումնասիրելով իր ու իր ժամանակակիցների հոգին ու առօրյան։ Նրան հարկավոր է նկարագրել ապարանից վանքի կամ Սողոմոնի տաճարի շինարարությունը, և նա վարպետորեն արել է այդ, քաջ ծանոթանալով համապատասխան գիտելիքներին ու մանրամասնորեն նշել քանդակագործության և շինարարության բոլոր անհրաժեշտ պարագաները։ Նրան հարկավոր է նկարագրել սայլի տեսարանը, և նա ոչ միայն սայլն ու եզները, բեռն ու սայլապանն է նկարագրում մանրամասնաբար, այլ և չի մոռանում լուծը, փոկերը, սամիները, սամու թելերը և այլն։ Նրան հարկավոր է նկարագրել լվերին և նա վարպետորեն անում է այդ, կանգ առնելով թե նրանց «կրկնապարոյր կռածագ կտցի» վրա, որով նրանք «ծծեն՝ ձգեն զարեան խոնաւութիւն...» «և թե նրանց մարմնի ու ցատկումների վրա. «լերկամարմին, փոքր հասակաւն իբր քիոք իմն թռիչս արձակեն և ըստ մարմնի ձևոյ ոստոստեալ այսր անդր տարաբերին»։

Ինչպես տեսնում ենք ամենուրեք նա քաջ ծանոթ է դեպքերին, երևույթներին, զննել ու ուսումնասիրել է առարկաներն՝ իրենց մանրամասնություններով. ուստի և նրա ստեղծագործությունները լոկ բանաստեղծական լինելուց զատ, ստացել են նաև գիտական արժեք։

Գալով բուսական աշխարհին, կարող ենք, եղած փաստերի հիման վրա, համոզված ասել, որ նա քաջածանոթ է եղել ոչ միայն այդ աշխարհին, այլ և այդ բնագավառին վերաբերող գիտական մտքին—ամբողջապես։ Թերևս հնարավոր լինի պնդել, որ նա ևս որոշ բնական երևույթներ դիտել ու բացատրել է հենց ինքը (բավական է մտաբերել Գյոթեի օրինակը)։ Նամանավանդ որ մեր խոսքը վերաբերում է ընդհանրապես բոլոր բանաստեղծների և մասնավորապես Նարեկացու սիրած բնաշխարհին։ Խոսելով ապարանից վանքի բակում տնկված պարտեզի մասին, նա բուսաբանին հատուկ տերմիններով է թվում այնտեղ տնկվող ծառերը. «ծառս գեղաստադարբս, շնորհաշառավիղս, ամբարձուղեշս, հաստատատեղունս, մարդադարմանս, բազկատարածուս, անիւնանիւղս, վայելչատերևս, ...պատուաստակիրս, պտղապարգևս...» Նույնպիսի բառերով է նկարագրում նա հողը՝ «ի գետինս գիրապարարս, արգաւանդաբոյս... ջրաբոյս... անձրևաբերունս, ցողամատոյցս...» և այլն։

Այս բոլորից հետո պարզ է, որ բոլորովին էլ անսպասելի չէ այն միտքը, որ նա արտահայտել է «պտուղն նմանէր խուռն տերևօք» կիսատողի մեջ։

Հարց է ծագում, եթե այդ երևույթը բացահայտվեց միայն գիտության այնպիսի զարգացման պայմաններում, որպիսին է XIX—XX դարերի գիտական մտքի մակարդակը, հապա ինչպե՞ս է պատահել, որ դեռ X դարում, գիտության ու տեխնիկայի այնքան ցածր զարգացման պայմաններում, հնարավոր է եղել արտահայտել այդպիսի ճշմարտություն։ Պատասխանը պիտի փնտռել հետևյալ երևույթի մեջ։ Մինչև օրս էլ, չնայած ժա-

ժանակակից գիտության բոլոր միջոցառումներին, շատ հաճախ է պատահում, երբ բույսը վնասատուներից և հիվանդություններից տերևազրկվում է ժամանակից շուտ (գարնանը կամ ամռանը), նրա պտուղների աճն ու հասունացումը դադարում է։ Պատահում է նաև այնպես, որ նման դեպքերում բույսը, ի հաշիվ գալիք տարվա բողբոջների, կրկին տերևակալում է և պտուղները, որոշ ուշացումով, նորից սկսում են աճել և հասունանալ։ Անշուշտ նման երևույթներ շատ են եղել նաև հնումը. այդ են վկայում հնագույն ձեռագրերից մեկում եղած հետևյալ տողերը.

«Թափել թրթուրից,
ջնջել մարախից»... և այլն)։

Ահա այսպիսի երևույթը չպիտի վրիպած լիներ Նարեկացու ուշադիր շրջահայացությունից։ Եվ եթե նրա սնոտիապաշտ ժամանակակիցներն այդ բոլորը կաշխատեին բացատրել ասավածային միջամտությամբ, ապա այնպիսի հանդուգն բանաստեղծն ու գիտնականը, որը նույնիսկ հերձվածող մականուն էր ստացել, պիտի որ աներ իրեն արժանավայել եղրակացություն՝ ձևակերպելով այնպիսի մի ճշմարտություն, որն իր գիտական ապացուցումն ստացավ ուղիղ 900 տարի նրա կյանքից հետո։

A. Мнацаканян

Важное ботаническое сведение у Григория Нарекаци

Вероятно велики были-бы удивление и восхищение естествоиспытателей, если-бы они были знакомы со стихотворением «Գոհար վարդն վառ առեալ» величайшего армянского поэта X века Григория Нарекаци, которое, раньше чем привлечь их внимание своими художественными достоинствами, привлекло бы их внимание именно той строчкой, в которой Нарекаци писал:

„Спелый плод шафрана питался листвой"

и из которой явствует, что автору этих слов была известна роль листьев в питании растений—факт ставший общепринятым в конце прошлого века.

Высказывание Нарекаци не случайное и не метафора, так как Нарекаци в равной мере был известен как крупнейший поэт, так и крупный ученый и знаменитый учитель.

В десятом веке, в условиях столь низкого развития науки и техники высказывание подобной истины было возможно только на основе внимательного наблюдения природных явлений и в частности преждевременного опадения листьев деревьев под влиянием различных заболеваний и вредителей.

A. Mnatsakanian

An important botanic information of Gregory Narekatsy

Probably, great should have been the wonder and admiration of naturalists had they been aware of the poetry „The precious rose flamed up" written by the greatest Armenian poet of the tenth century—

Gregory Narekatsy. Prior to its elegance, the following line of this poetry should have specially drawn the attention of the naturalists:

„The mature saffron was feeding on its dense leaves,"

from which it appears that the nourishing role of the leaf has been evident to the pock—which fact has not been accepted till the end of the last century.

This objection of Narekatsy should not be considered on occasio nal or metaphorical expression, for the simple reason that its writer enjoys the reputation of a great man of—letters, a talented scentist and a renowned scholar, which titles are equally conforred on him.

In the tenth century, when science and technical knowledge were in their lowest stage of development the statment of such a truth could only be based on the attentive observation of natural phenomena and particulury on the early fall of leaves due to various diseases or to the attack of viruses.